ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 4

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 8

3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման 8

3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման 11

3.2. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման 14

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 16

5. ԱՄՓՈՓՈՒՄ 18

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2022 թվականին ռուս-ուկրաինական հակամարտության զարգացումների արդյունքում համաշխարհային տնտեսությունում, այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների տնտեսություններում, տեղի է ունեցել տնտեսական աճի դանդաղում՝ պայմանավորված համաշխարհային մատակարարման շղթաների խաթարմամբ, դրա արդյունքում պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, ձևավորված բարձր գնաճային միջավայրը մեղմելուն ուղղված՝ կենտրոնական բանկերի զսպող դրամավարկային քաղաքականությամբ: Մարտ ամսից արագացող գնաճը զսպելու նպատակով առաջատար տնտեսությունների կենտրոնական բանկերի կողմից իրականացվող զսպող քաղաքականության արդյունքում վերջին երկու եռամսյակներում նկատվում է գնաճի տեմպերի դանդաղում, սակայն այն շարունակում է բարձր մնալ սահմանված թիրախներից:

Ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների ազդեցությունների արդյունքում 2022 թվականին Հայաստանում գրանցվել է բավական բարձր տնտեսական աճ: 2022 թվականի պետական բյուջեով կանխատեսվում էր 7.0% տնտեսական աճ, սակայն, պայմանավորված արտաքին շոկերի արդյունքում ՀՀ համար ձևավորված նպաստավոր տնտեսական զարգացումներով (մասնավորապես՝ հակամարտող երկրներից դեպի Հայաստան մարդկանց ներհոսք, ՌԴ-ից ՏՏ ոլորտի աշխատակիցների և ընկերությունների՝ ՀՀ տեղափոխում, դեպի ՌԴ արտահանման պահանջարկի զգալի ավելացում, ինչպես նաև դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջության բարձր աճ), 2023 թվականի պետական բյուջեով 2022 թվականի տնտեսական աճի կանխատեսումը վերանայվեց 11.0%-ի: Սակայն, հետագա տնտեսական զարգացումներն ընթացան սպասվածից ավելի նպաստավոր պայմաններում և արդյունքում գրանցվեց 12.6% տնտեսական աճ:

Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների աճով (նպաստումը՝ 9.3 տոկոսային կետ): Արդյունաբերությունը և շինարարությունը ևս աճել են՝ դրական նպաստում ունենալով տնտեսական աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 1.3 և 1.2 տոկոսային կետեր): Մինչդեռ գյուղատնտեսության նվազումը բացասաբար է ազդել տնտեսական աճի վրա (նպաստումը՝ -0.1 տոկոսային կետ):

Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճը, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ:
Կանխատեսված ցուցանիշը 2022թ. պետական բյուջեի հիմքում ընկած կանխատեսումն է, իսկ վերանայվածը՝ 2023թ. պետական բյուջեի հիմքում դրված սցենարում 2022թ. սպասումն է:

2022 թվականին տեղի է ունեցել տնտեսության արտաքին դիրքի զգալի բարելավում, ինչի արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 0.9%-ը: Ընթացիկ հաշվի և նրա բաղադրատարրերի ցուցանիշների կանխատեսումներից շեղումը հիմնականում պայմանավորվել է ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ-ի նկատմամբ կիրառվող աննախադեպ պատժամիջոցների հետևանքով դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի մեծ ներհոսքերով:

2022 թվականն առանձնացել է նաև բարձր գնաճով, որը կազմել է 8.3%՝ գերազանցելով ՀՀ կենտրոնական բանկի նպատակային՝ 4+/-1.5% ցուցանիշը: Տարվա ընթացքում, հաշվի առնելով ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում գնաճային զարգացումները և գնաճային սպասումների որոշակի արագացումը, ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքն ընդհանուր առմամբ 3.0 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10.75%:

Արդյունաբերության ճյուղում գրանցվել է ընդհանուր տնտեսական աճից ավելի ցածր տեմպով աճ՝ շուրջ 7.9%՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 8.5 տոկոսային կետ): Վերջինիս աճին նպաստել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճը: ՌԴ ներմուծման շուկաների սահմանափակումները և ՌԴ-ում ՀՀ ապրանքների գնային մրցունակության բարձրացումը նպաստել են ՀՀ-ից դեպի ՌԴ մշակող արդյունաբերության արտահանման ավելացմանը, բացի այդ, ծառայությունների և շինարարության ոլորտի դրական զարգացումները մեծացրել են մշակող

արդյունաբերության որոշ տեսակների նկատմամբ պահանջարկը: Գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է թողարկման 1.6% աճ, սակայն միևնույն ժամանակ գյուղատնտեսության ավելացված արժեքը նվազել է, ինչը բացատրվում է գյուղատնտեսության թողարկման նկատմամբ վերջինիս միջանկյալ սպառման ավելի արագ աճով: Շինարարության ճյուղում գրանցված 12.5% աճը պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումը՝ 9.3 տոկոսային կետ): Վերջինս պայմանավորվել է հիմնականում բնակարանային շինարարության ծավալների աճով, որին նպաստել է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների՝ եկամտային հարկից վերադարձման պետական աջակցության ծրագիրը, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքի պայմաններում բնակարանային շուկայում առաջացած պահանջարկը:

Ծառայություններն աճել են 28.2%-ով՝ հիմնականում պայմանավորված «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» (նպաստումը՝ 12.4 տոկոսային կետ), «տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 7.3 տոկոսային կետ), «տրանսպորտ» (նպաստումը՝ 4.6 տոկոսային կետ), ինչպես նաև «կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 1.7 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճով: «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղի դրական զարգացումները զուգորդվել են բանկային համակարգում 2022 թվականին (հիմնականում երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներում) շահութաբերության աննախադեպ բարձր ցուցանիշներով: «Տեղեկատվություն և կապ», «տրանսպորտ», ինչպես նաև «կացության և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղերի դրական զարգացումները պայմանավորված են եղել ՌԴ-ից ՏՏ ոլորտի աշխատակիցների և ընկերությունների՝ ՀՀ տեղափոխմամբ, ինչպես նաև դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջության բարձր աճի տեմպերով: Առևտրի 17% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 14.2 տոկոսային կետ):

2022 թվականին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, ռուբլու և եվրոյի նկատմամբ էապես արժևորվել է՝ պայմանավորված արտարժույթի նշանակալի ներհոսքով: ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը 2022 թվականին արժևորվել է համապատասխանաբար 15.6%-ով, 29.4%-ով և 5.5%-ով:

Աղյուսակ 1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ. պետական բյուջեի մասին օրենքի / 2022թ. պետական բյուջեի ուղերձի համաձայն	2022թ. Փաստ.
Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ						
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	**6,017.0**	**6,543.3**	**6,181.9**	**6,983.0**	**7,869.4**	**8,496.8**
ՀՆԱ-ի իրական աճ, %	**5.2**	**7.6**	**-7.2**	**5.7**	**7.0**	**12.6**
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.8	1.0	1.8	6.9	4.6	8.1
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	1.8	0.7	3.7	7.7	5.2	8.3
Գնաճ (միջին), %	2.5	1.4	1.2	7.2	5.6	8.6
Գործազրկության մակարդակը	-	18.3	18.2	15.5	-	13.0
1 շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար[1]	4,196	4,597	4,269	4,679	5,148	6,569
Հիմնական միջոցներում ներդրումներ / ՀՆԱ, %	16.7	15.8	17.8	18.3	18.7	17.5
Արտահանում / ՀՆԱ, %	39.4	41.4	29.8	35.3	34.5	47.7
Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ, %	-7.4	-7.3	-3.8	-3.7	-3.0	0.9

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2022 թվականին պետական բյուջեի եկամուտները նախորդ տարվա համեմատ զգալիորեն աճել են շուրջ 22 %-ով, ինչն ուղեկցվել է այլ եկամուտների տեսակարար կշռի 0.9 տոկոսային կետով ավելացմամբ և հարկային եկամուտների ու պետական տուրքերի տեսակարար կշռի նույնքան նվազմամբ:

Պաշտոնական դրամաշնորհները 2022թ. նախորդ տարվա համեմատ աճել են 21.1%-ով՝ կազմելով 15.0 մլրդ դրամ և ճշտված պլանի համեմատ թերակատարվելով 24.6%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի

[1] Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կանխատեսումներում հաշվարկվել է՝ հիմք ընդունելով տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը:

կատարողականով, ինչպես նաև արտարժույթների ծրագրված և փաստացի փոխարժեքների տարբերություններով: Պետական բյուջեի այլ եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 44.5%-ով և իսկ ճշտված պլանի համեմատ գերակատարվել են 7.8%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի և ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից ստացված մուտքերի տարեկան ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ, ինչպես նաև բանկերում ու այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարների գծով մուտքերի աճով:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.				
	Փաստացի	Պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %	Աճը 2021թ. համեմատ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	**1,683.8**	**1,947.8**	**2,058.2**	**2,063.1**	**100.2**	**22.5**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**1,586.9**	**1,843.9**	**1,925.0**	**1,926.0**	**100.0**	**21.4**
Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	41.8	19.9	15.0	75.4	21.1
Այլ եկամուտներ	84.6	62.1	113.3	122.1	107.8	44.5

Պետական բյուջեի եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել հարկային եկամուտների շուրջ 21.4% աճով, որոնք նախապես պլանավորվածի համեմատ շուրջ 82.1 մլրդ դրամով ավելի են եղել: Հարկային եկամուտների գերակատարումը պլանավորվածի համեմատ հիմնականում պայմանավորված է եղել սպասվածից բարձր տնտեսական աճով: Բացի այդ, հարկերի առավել հավաքագրմանը նպաստել է նաև միջին գնաճը, որը 2022թ. կազմել է 8.6%՝ 3.0 տոկոսային կետով բարձր լինելով բյուջեի հիմքում դրված 5.6% գնաճի կանխատեսումից:

Աղյուսակ 3. Հարկային եկամուտները 2021-2022թթ., մլրդ դրամ

	2021	2022
Ընդամենը	**1,586.9**	**1,926.0**
ԱԱՀ	556.0	679.6
Ակցիզային հարկ	113.1	127.5
Շահութահարկ	158.6	222.8
Եկամտային հարկ	426.3	474.8
Պետական տուրք	66.9	106.8
Մաքսային տուրք	84.8	56.7
Բնապահպանական, բնօգտագործման վճար	62.7	95.9
Այլ հարկեր	90.1	121.1
Այդ թվում՝ Դրոշմանիշային վճարներ	30.7	37.0
Շրջանառության հարկ	32.4	40.7

2022թ. հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 22.2%), շահութահարկի (աճը՝ 40.5%) և եկամտային հարկի (աճը՝ 11.4%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 7.8, 4.0 և 3.1 տոկոսային կետ: Զգալի չափով՝ 33.2%-ով նվազել է մաքսատուրքը՝ հիմնականում պայմանավորված ՌԴ նկատմամբ սանկցիաների արդյունքում ՌԴ ներմուծման էական նվազմամբ: Մաքսատուրքերի անկումը հարկերի աճին հակազդել է 1.8 տոկոսային կետով:

ՀՆԱ-ի նկատմամբ, սակայն, հարկային եկամուտների հարաբերակցությունը փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 22.65% նախորդ տարվա 22.70%-ի փոխարեն: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությանը բացասական նպաստում են ունեցել մաքսատուրքը (0.5 տ.կ.) և եկամտային հարկը (0.5 տ.կ.): Մաքսատուրքի նվազման պատճառները նշված են վերևում, իսկ եկամտային հարկի՝ ՀՆԱ-ի համեմատ դանդաղ աճը պայմանավորված է մի կողմից՝ դրույքաչափի նվազմամբ, մյուս կողմից՝ հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ծավալների աճով: Տնտեսության կառուցվածքի փոփոխությունը ևս բացասաբար է ազդել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա, քանի որ 2022թ. տնտեսական աճը հիմնված է եղել հարկային համեմատաբար ցածր բեռ ունեցող ոլորտների (օրինակ՝ ֆինանսական ոլորտի, հանրային սննդի կազմակերպման և այլնի) վրա: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությանը դրական նպաստում են ունեցել հարկատեսակներից շահութահարկը (0.4 տ.կ.) և պետական տուրքը (0.3 տ.կ.), որոնցից առաջինը պայմանավորված է 2021թ. շահույթների աճով, իսկ երկրորդն օրենսդրական փոփոխությունների արդյունք է:

Գծապատկեր 2. Հարկային եկամուտների աճը և ՀՆԱ-ի նկատմամբ փոփոխությունը 2022թ.



Այսպիսով, ընդհանուր առմամբ 2022 թվականը դրական տարի էր պետական բյուջեի եկամուտների տեսանկյունից, քանի որ սպասվածից բարձր տնտեսական զարգացումների արդյունքում հավաքագրվել են պլանավորվածից բարձր եկամուտներ: Սակայն, միևնույն ժամանակ, չի հաջողվել առաջընթաց ունենալ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման տեսանկյունից, որը հանդիսանում է կառավարության ծրագրի կարևոր թիրախներից մեկը և մինչև 2026 թվականը պետք է հասնի ՀՆԱ-ի 25.0%-ին: Հարկ է նշել, որ 2022թ. եղել են հարկեր/ՀՆԱ-ի վրա ինչպես բացասաբար, այնպես էլ դրականորեն ազդող գործոններ, սակայն հարկային վարչարարության բարելավումը և ստվերի կրճատման տեմպը բավարար չեն եղել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը բարելավելու համար:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման

Պետական բյուջեի ծախսերը 2022 թվականին աճել են, սակայն ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է: 2022 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,242.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.9%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 1,862.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.2%-ով: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2021 թվականի նկատմամբ նվազել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 26.4%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 3.7 տոկոսային կետով՝ կազմելով 21.9%: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 380.4 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 389.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 78.2%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 4.5%:

Բյուջեի ծախսերը շուրջ 58.6 մլրդ դրամով կամ 2.7%-ով գերազանցել են պլանային ցուցանիշը, սակայն 2.0%-ով թերակատարվել են ճշտված պլանի համեմատ: Ճշտված ծրագրային ցուցանիշի ավելացում հիմնականում կատարվել է պաշտպանության նախարարության, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական հարցերի ու առողջապահության նախարարությունների ծախսերում, իսկ նվազեցումների հիմնական մասը կատարվել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ֆինանսների նախարարությունների ծախսերում:

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում տեղի են ունեցել էական փոփոխություններ: Մասնավորապես, էականորեն՝ շուրջ 6.2 տոկոսային կետով աճել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը՝ 10.8%-ից հասնելով 17.0%-ի, իսկ ընթացիկ ծախսերի կշիռն ընդհանուր ծախսերում կրճատվել է 6.0 տոկոսային կետով (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման



Ընթացիկ ծախսերը ճշտված պլանի համեմատ թերակատարվել են շուրջ 1.4%-ով (կատարողականը կազմել է 98.6%): Ընդ որում, թերակատարում է արձանագրվել ընթացիկ ծախսերի բոլոր հոդվածների գծով, սակայն համեմատաբար ցածր են եղել ծառայությունների և ապրանքների ձեռքբերման և դրամաշնորհների գծով նախատեսված ծախսերի կատարողականները՝ համապատասխանաբար 97.3% և 98.0%:

Սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով արձանագրվել է նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազում՝ 1.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է նպաստների գծով ծախսերի կրճատմամբ: Վերջինս էլ իր հերթին կապված է, ռազմական դրությամբ պայմանավորված, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին 2021 թվականին դրամական աջակցության տրամադրման հետ:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	2021	2022				
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2021թ. նկատմամբ
Ընդամենը ծախսեր	**2,004.3**	**2,184.0**	**2,288.0**	**2,242.6**	**98.0%**	**11.9%**
Ընթացիկ ծախսեր	**1,788.0**	**1,842.2**	**1,888.0**	**1,862.2**	**98.6%**	**4.2%**
Աշխատանքի վարձատրություն	181.4	184.6	195.8	194.1	99.1%	7.0%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	198.5	195.9	210.9	205.3	97.3%	3.4%
Տոկոսավճարներ	180.8	213.8	198.8	198.3	99.8%	9.7%
Սուբսիդիաներ	136.8	141.8	151.8	150.5	99.1%	10.0%
Դրամաշնորհներ	204.7	226.8	243.5	238.6	98.0%	16.6%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	621.2	574.4	618.2	613.1	99.2%	-1.3%
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	**216.3**	**341.9**	**400.0**	**380.4**	**95.1%**	**75.8%**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**218.4**	**351.9**	**410.1**	**389.1**	**94.9%**	**78.2%**
Հիմնական միջոցներ	218.2	351.9	410.0	389.1	94.9%	78.3%
Շենքեր և շինություններ	177.6	298.3	357.3	341.9	95.7%	92.6%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	37.6	42.5	44.9	41.3	92.2%	9.9%

Այլ հիմնական միջոցներ	3.0	11.1	7.9	5.8	74.0%	92.5%
Չարտադրված ակտիվներ	0.2	0.1	0.0	0.0	100.0%	-92.6%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(2.1)	(10.1)	(10.1)	(8.7)	86.7%	322.6%

2020-2021 թվականների կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը 2022 թվականին մեղմվել է, և կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 94.9%՝ նախորդ տարվա 92.5%-ի համեմատ բարելավվելով 2.4 տոկոսային կետով: Հատկանշական է, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը (առանց պետական բյուջեի համաֆինանսավորման) վատացել է՝ ճշտված ծրագրի նկատմամբ կազմելով 80.5% (2021 թվականին այդ ցուցանիշը կազմել էր 88.1%): Սա նշանակում է, որ կապիտալ ծրագրերի, հատկապես՝ արտաքին աջակցությամբ իրականացվող, կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման

Պետական բյուջեի գործառնական դասակարգմամբ կառուցվածքում նույնպես տեղի են ունեցել փոփոխություններ: Մասնավորապես, 4.6 տոկոսային կետով աճել է պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը՝ 16.8%-ից դառնալով 21.4%: Աճել է նաև հասարակական կարգին և անվտանգության վրա ծախսվող գումարների կշիռն ընդհանուր ծախսերում՝ 8.0%-ից դառնալով 8.8%: Փոխարենը զգալիորեն նվազել է սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտների ծախսերի կշիռները՝ համապատասխանաբար 3.5 և 1.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման



«Պաշտպանություն» և «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» հոդվածներով ծախսերի ծավալներն էապես աճել են նաև նախորդ տարվա համեմատ՝ համապատասխանաբար 43.0%-ով և 23.0%-ով: Ընդ որում, ավելի քան 14.5 մլրդ դրամով ավելացել են Ոստիկանության ծախսերը, 11.7 մլրդ դրամով՝ Ազգային անվտանգության և 1.1 մլրդ դրամով Պետական պահպանության ծառայության ծախսերը (ընդհանուր 27.3 մլրդ դրամով): Փոխարենը՝ մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված կրթության ոլորտի ծախսերը նման տպավորիչ աճ չեն գրանցել՝ նախորդ տարվա համեմատ աճելով ընդամենը 10.9%-ով:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման, մլրդ դրամ

	2021	2022				
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2021թ. համեմատ, %
Ընդամենը ծախսեր	**2,004.3**	**2,184.0**	**2,288.0**	**2,242.6**	**98.0%**	**11.9%**
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	381.0	430.1	415.0	407.4	98.2%	6.9%
Պաշտպանություն	336.0	347.0	481.0	480.4	99.9%	43.0%
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	160.0	171.6	202.5	196.9	97.2%	23.0%
Տնտեսական հարաբերություններ	151.8	211.6	187.8	175.8	93.6%	15.8%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	6.0	9.8	8.4	6.8	81.2%	13.0%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	9.5	16.0	10.7	9.5	88.7%	-0.7%
Առողջապահություն	160.5	122.5	144.0	142.2	98.7%	-11.4%
Հանգիստ, մշակույթ և կրոն	30.4	32.8	44.9	43.9	97.6%	44.2%
Կրթություն	149.1	193.0	170.7	165.4	96.9%	10.9%
Սոցիալական պաշտպանություն	620.0	581.3	621.0	614.5	98.9%	-0.9%
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	-	68.4	2.0	-	0.0%	

Տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 15.8%-ով՝ կազմելով 175.8 մլրդ դրամ: Սակայն, ի սկզբանե

պլանավորված է եղել իրականացնել 211.6 մլրդ դրամի չափով ծախսեր տնտեսության զարգացման ուղղությամբ, որը հետագայում վերանայվել է դեպի ներքև՝ կազմելով 187.8 մլրդ դրամ, որն էլ փաստացի թերակատարվել է 6.4%-ով:

Հարկ է նշել նաև, որ պաշտպանությանն ուղղվող ծախսերից շուրջ 237.4 մլրդ դրամը հանդիսացել է կապիտալ ծախս, ինչը նշանակում է, որ ընդհանուր 389.1 մլրդ դրամ կապիտալ ծախսերից ընդամենը 151.7 մլրդ դրամն է ուղղվել տնտեսության արդիականացմանը (ենթակառուցվածքային կամ այլ ծրագրերին), իսկ մնացած մասն ուղղվել է պաշտպանությանը: Վերջինս, իհարկե, չափազանց կարևոր է, սակայն տպավորություն է ստեղծվում, որ կառավարությունը նախորդ տարիներին չիրականացրած պաշտպանական ծախսերը որոշել է կատարել մեկ տարվա ընթացքում, ինչը զսպել է դեպի տնտեսություն ուղղվող կապիտալ ծախսերի ծավալը:

3.2. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 174 ծրագրերի իրականացում 46 պետական մարմինների և կառավարության պատասխանատվության ներքո: Կառավարության կատարած ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 175, որից փաստացի միջոցներ են օգտագործվել 171-ի գծով, իսկ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 977 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 944-ը կամ 96.6%-ը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ 2022 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 24 ծրագիր, որոնք հիմնականում կապիտալ ծախսեր են: Դրանց գծով փաստացի ծախսերը կազմել են 223.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 94.9%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային ցանցի բարելավման, քաղաքային զարգացման և ոռոգման համակարգի առողջացման ծրագրերի կատարողականով, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2022 թվականին ոռոգման համակարգի առողջացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 94.4%-ը, ճանապարհային ցանցի

բարելավման ծրագրի համար նախատեսված գումարների 91.9%-ը, ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրի՝ 87.2%-ը, քաղաքային զարգացման ծրագրի՝ 90.4%-ը: Հարկ է նշել, որ նշված միջոցառումները թերակատարվել են ճշտված պլանի համեմատ:

Ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվության ներքո իրականացվող ծրագրերը: Մասնավորապես, 2022 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 12 ծրագիր: Ծախսերը կազմել են 53.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.3%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է զբոսաշրջության զարգացման, բուսաբուծության խթանման և բույսերի պաշտպանության, ինչպես նաև ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերն աճել են 22.4%-ով կամ 9.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության արդիականացման ու գյուղատնտեսության խթանման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Վերոհիշյալ ծրագրերի թերակատարման ցուցանիշները ամբողջական պատկեր չեն արտացոլում, քանի որ ներկայացված չեն ծրագրերի արդյունքային ցուցանիշների կատարողականները: Մասնավորապես, ծրագրային բյուջետավորումը ենթադրում է, որ յուրաքանչյուր ծրագրի գծով պետք է հաստատվեն հստակ չափելի արդյունքային ցուցանիշներ (օրինակ՝ քանի կիլոմետր ճանապարհ է կառուցվելու կամ վերանորոգվելու, կամ քանի հեկտար տարածք է ապահովվելու ոռոգմամբ), որոնց կատարողականը կարտացոլի ծրագրի կատարման չափը: Մինչդեռ, ներկայումս բյուջեի ծրագրային ներկայացումը պարզապես ծախսերի այլ դասակարգում է, որը ծախսերի նպատակայնության մասին ամբողջական տեղեկատվություն չի տալիս:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2022 թվականի ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 179.5 մլրդ դրամ պակասուրդ՝ նախորդ տարվա 320.5 մլրդ դրամի համեմատ: ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 2.1%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.5 տոկոսային կետով: Ընդ որում, պետական բյուջեի պակասուրդը զգալիորեն՝ շուրջ 56.8 մլրդ դրամով ցածր է եղել պլանավորված մակարդակից:

Պակասուրդը ֆինանսավորվել է ներքին միջոցների հաշվին, ինչպես և պլանավորվել էր պետական բյուջեով: Մասնավորապես, ներքին ռեսուրսներից ներգրավվել է շուրջ 288.1 մլրդ դրամ, որը գերազանցել է պլանավորված 272 մլրդ դրամ ցուցանիշը, սակայն ցածր է եղել 308 մլրդ դրամ ճշտված պլանի ցուցանիշից: Արտաքին ֆինանսավորման տեսանկյունից զուտ փոխառությունների ներգրավման ցուցանիշը բացասական է եղել, ինչը նշանակում է, որ կառավարությունն ավելի շատ մարել է արտաքին պարտավորությունները, քան ներգրավել է նորերը: Էականորեն բարձր են եղել նաև Արցախին տրամադրվող միջպետական վարկի գումարները, որոնց փաստացի ծավալը 2022թ. կազմել է 176.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 36.6%-ով: Վերջինս նաև գերազանցել է պլանավորված գումարը շուրջ 32 մլրդ դրամով:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը

	2021	2022		
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.
Մլրդ դրամ				
Բյուջեի պակասուրդ	**320.5**	**236.3**	**229.8**	**179.5**
Ներքին աղբյուրներ	**101.2**	**272.2**	**308.5**	**288.1**
Փոխառու զուտ միջոցներ	240.0	250.2	252.0	252.0
Ֆինանսական զուտ ակտիվներ	-138.7	22.0	56.5	36.1
Արտաքին աղբյուրներ	**219.3**	**-36.0**	**-78.7**	**-108.6**
Փոխառու զուտ միջոցներ	350.9	108.5	98.2	66.2
Ֆինանսական զուտ ակտիվներ	-131.7	-144.5	-176.9	-174.8

Վարկերի և փոխատվությունների տրամադրում, այդ թվում՝	-128.8	-144.0	-176.0	-176.0
Միջպետական վարկ Արցախի Հանրապետությանը	-128.8	-144.0	-176.0	-176.0
% ՀՆԱ-ում				
Բյուջեի պակասուրդ	**4.6**	**3.0**	**-**	**2.1**
Ներքին աղբյուրներ	**1.4**	**3.5**	**-**	**3.4**
Փոխառու զուտ միջոցներ	3.4	3.2	-	3.0
Ֆինանսական զուտ ակտիվներ	-2.0	0.3	-	0.4
Արտաքին աղբյուրներ	**3.1**	**-0.5**	**-**	**-1.3**
Փոխառու զուտ միջոցներ	5.0	1.4	-	0.8
Ֆինանսական զուտ ակտիվներ	-1.9	-1.8	-	-2.1
Վարկերի և փոխատվությունների տրամադրում, այդ թվում՝	-1.8	-1.8	-	-2.1
Միջպետական վարկ Արցախի Հանրապետությանը	-1.8	-1.8	-	-2.1

2022 թվականի փոխարժեքի արժևորումը, բարձր տնտեսական աճը և բյուջեի պակասուրդի կրճատումը թույլ են տվել ապահովելու ՀՆԱ համեմատությամբ կառավարության պարտքի նվազում, որի հետևանքով կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասել է 46.7%-ի: Պարտք/ՀՆԱ ցուցանիշի 13.6 տոկոսային կետով նվազմանը 11 տոկոսային կետով նպաստել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը, 6.2 տոկոսային կետով՝ տնտեսական աճը, 1.8 տոկոսային կետով՝ իրական տոկոսադրույքի նվազումը, և 0.2 տոկոսային կետով՝ առաջնային պակասուրդը: Պետական բյուջեից զուտ վարկավորումը կազմել է ՀՆԱ-ի 1.7%-ը, որը հանդիսացել է պարտքի բեռը մեծացնող գործոն:

Տարվա ընթացքում կանխատեսվածից բարձր տնտեսական աճի պայմաններում կառավարությունը պլանավորված չեզոք հարկաբյուջետային քաղաքականության փոխարեն իրականացրել է զսպող քաղաքականություն:

Գծապատկեր 5. ՀՀ կառավարության պարտքի և պակասուրդի դինամիկան





Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

2022 թվականը բավական նպաստավոր տարի էր հարկաբյուջետային հատվածի համար: Այսպես, 2022թ. արտաքին գործոնների ազդեցությունների արդյունքում գրանցվել է մի կողմից՝ էականորեն բարձր տնտեսական աճ (թիրախավորվածից 5.6 տոկոսային կետով բարձր), մյուս կողմից՝ սպասվածից բարձր գնաճ (կանխատեսվածից 3 տոկոսային կետով բարձր): Հետևաբար, պետական բյուջեի հարկային եկամուտները աճել են՝ հանգեցնելով պակասուրդի կրճատման և ծախսերի ավելացման հնարավորությունների մեծացման: Դրական գործոնների արդյունքում հնարավոր է եղել դեպի վերև ճշգրտել պլանավորված ծախսերը, որոնք, սակայն, ամբողջությամբ չեն իրականացվել:

Միևնույն ժամանակ, 2022թ. առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնք կարող են բարդ իրավիճակ ստեղծել ապագայում: Մասնավորապես, փոխարժեքի զգալի արժևորումը բացասաբար է ազդում տնտեսության մրցունակության վրա՝ հանգեցնելով ոչ միայն արտահանման նվազման, այլ նաև տեղական շուկայում ներմուծված ապրանքների գնային գրավչության մեծացման: Այսինքն՝ այս պայմաններում տուժում են ոչ միայն արտահանողները, այլև տեղական շուկայում ներմուծման հետ մրցակցող տնտեսավարողները: Այս իրավիճակի երկարատև շարունակության դեպքում էական վնաս կհասցվի ՀՀ տնտեսության արտահանելի հատվածին, իսկ բարձր աճ ապահովող գործոնների (մարդկանց և կապիտալի

ներհոսք) չեզոքացման դեպքում ի հայտ կգան տնտեսական ճգնաժամի առաջացման և տնտեսական ներուժի անկման վտանգներ:

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում տեղի չի ունեցել, ինչը խոսում է վարչարարության և ստվերի կրճատման դանդաղ տեմպերի մասին: 2022թ. հարկեր/ՀՆԱ-ի վրա եղել են ինչպես բացասաբար ազդող (մաքսատուրքեր, եկամտային հարկ, տնտեսության կառուցվածք), այնպես էլ դրականորեն ազդող (շահութահարկ, արտահանման տուրք) գործոններ: Դրանք հիմնականում միմյանց չեզոքացրել են, ինչի արդյունքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում չի արձանագրվել, որը նաև պայմանավորված է եղել հարկային վարչարարության բարելավման և ստվերային տնտեսության կրճատման ոչ բավարար տեմպով:

Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը էապես նվազել է՝ մեծացնելով «հարկաբյուջետային տարածքը», սակայն անորոշությունը և ռիսկերը պահպանվում են: Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 13.6 տոկոսային կետով, ինչը լրացուցիչ «տարածք» է տալիս կառավարությանը հաջորդ տարիներին առավել խոշոր ծախսեր իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, բարձր տնտեսական աճ ապահովող գործոնների չեզոքացման ռիսկերը պահպանվում են, որոնց նյութականացման պարագայում էական բացասական ազդեցություններ կլինեն ինչպես տնտեսական աճի, այնպես էլ պարտքի մակարդակի վրա:

Կապիտալ ծախսերի թերակատարումը շարունակում է մնալ պետական բյուջեի կատարման առանցքային խնդիրներից: Կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը 2022 թվականին թեև փոքր-ինչ մեղմվել է, սակայն արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի (որոնք հիմնականում ենթակառուցվածքային ծրագրեր են) կատարողականը վատթարացել է: Այսպես, ընդհանուր ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 94.9%՝ նախորդ տարվա 92.5%-ի համեմատ բարելավվելով 2.4 տոկոսային կետով, մինչդեռ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը վատացել է՝ ճշտված ծրագրի նկատմամբ կազմելով 80.5% (2021 թվականին այդ ցուցանիշը կազմել էր 88.1%): Սա նշանակում է, որ կապիտալ ծրագրերի, հատկապես՝ արտաքին աջակցությամբ իրականացվող, կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Ծրագրային բյուջետավորումը դեռևս չի գործում պատշաճ կերպով: Ծրագրային բյուջետավորումը ենթադրում է, որ յուրաքանչյուր ծրագրի գծով պետք է

հաստատվեն հստակ չափելի արդյունքային ցուցանիշներ (օրինակ՝ քանի կիլոմետր ճանապարհ է կառուցվելու կամ վերանորոգվելու, կամ քանի հեկտար տարածք է ապահովվելու ոռոգմամբ), որոնց կատարողականը կարտացոլի ծրագրի կատարման չափը: Մինչդեռ, ներկայումս բյուջեի հաշվետվությունում ներկայացվում է միայն ծրագրերի գծով իրականացված փաստացի ծախսերի համեմատությունը պլանավորվածի հետ՝ առանց համեմատելու գրանցված արդյունքները պլանավորված արդյունքների հետ: Հետևաբար, ստացվում է, որ բյուջեի ծրագրային ներկայացումը պարզապես ծախսերի այլ դասակարգում է, որը ծախսերի նպատակայնության մասին ամբողջական տեղեկատվություն չի տալիս:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*